ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒԼԻՍԻ 2024թվականի N 807-Ա

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝

1. Հաստատել՝

1) Աղետների ռիսկի կառավարման պլանը.

2) Համայնքի բնակավայրերի վտանգների, խոցելիության և կարողությունների սխեմատիկ պատկերները՝ համաձայն N 1 հավելվածի.

3) Աղետների ռիսկի կառավարման միջոցառումների օրացույցը՝ համաձայն N 2 հավելվածի.

4) աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների պլան-ժամանակացույցը՝ համաձայն N 3 հավելվածի.

5) ազդարարման և տեղեկատվության փոխանակման սխեման՝ համաձայն N 4 հավելվածի.

6) բնակչության տարահանման ժամանակը՝ համաձայն N 5 հավելվածի.

7) ստանդարտ գործողությունների ընթացակարգերն ըստ բնորոշ աղետների՝ համաձայն N 6 հավելվածի:

2. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման ժամանակ՝ սույն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով հաստատվող N 6 հավելվածում ներառված միջոցառումներից որևէ երեքն իրականացնելու դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:

3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

20 __ թ. _____ _____

ք.Ճամբարակ